Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՌԱԼՖ ԵՒՐԻԿԵԱՆ, ՈՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Համայն հայութեան նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատարիմ զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները։

Գոհունակութիւն է Մեզ համար հաստատել, որ Դուք գովարժան նուիրումով ու աստուածասիրութեամբ սատար էք լինում լուսաւորչահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տէրունապատուէր առաքելութեանը, ինչը խօսուն վկայութիւն է առ մեր Սուրբ Եկեղեցին ունեցած Ձեր որդիական սիրոյ և հաւատարմութեան։ Բարեպաշտ ու եկեղեցասէր ոգով, Դուք ազնիւ նուիրատուութիւնների շարունակական մատուցմամբ աստուածահաճոյ զօրակցութիւն էք բերում Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառութեանը։ Ձեր նշանակալի իրագործումներում մեծապէս գովելի է Արցախի թեմում Ստեփանակերտի եկեղեցու շինարարութիւնը։ Եկեղեցասէր հայորդուդ աջակցութեամբ կառուցեալ աղօթատունը պիտի նպաստի Արցախի հաւատաւոր Մեր զաւակների հոգևոր վերազարթօնքին և նրանց հոգիներում քրիստոնէական մեր սրբութիւնների նկատմամբ սիրոյ ու նախանձախնդրութեան ամրապնդմանը։

Մեծարգոյ Տիար, առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցուն և հաւատաւոր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք հաւատում ենք, որ եկեղեցանուէր նոյն սիրով ու քաջեռանդութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ կեանքով և բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու և մեր ժողովրդի:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ և Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արևշող բազում օրեր և Ձեր բոլոր առաքինի ձեռնարկումները պսակի մշտակայ յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ և ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 8-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2007 և ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 451